

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ
ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի (այսուհետ՝ համալսարան) ռեկտորին կից վերահսկման մշտական գործող հանձնախումբը (այսուհետ՝ որակի վերահսկման հանձնախումբ) ռեկտորին կից՝ որակի վերահսկման քաղաքականություն իրականացնող ինքնուրույն գործող կառույց է, որի գործունեությունը համապատասխանում է Եվրոպական չափանիշներով ձևակերպված հիմնարար սկզբունքներին:

1.1 Համալսարանի որակի վերահսկման և ապահովման համակարգը պետք է համապատասխանի և բավարարի Եվրոպական (ENQE) ստանդարտներով ձևակերպված չորս ընդհանուր սկզբունքներին

- համալսարանը կրում է առաջնային պատասխանատվություն բարձրագույն կրթության որակի և ստանդարտների պահպանման համար,
- համալսարանը հաշվետու է ուսուցման որակի և ելքային արդյունքների համար բարձրագույն կրթության հիմնական շահառուների՝ ուսանողների, գործատուների, հիմնադրի և ֆինանսավորողների առջև,
- համալսարանը պետք է կարողանա հավաստել իր կողմից առաջարկվող կրթության որակն ու արդյունքները Հայաստանի Հանրապետությունում և արտերկրներում,

- համալսարանի կրթահամակարգը պետք է նախատեսի ու ապահովի ուսանողների և բարձրագույն կրթության մյուս շահառուների սպասելիքների համահունչ ուսուցման որակի շարունակական բարելավում:
- 1.2 Որակի վերահսկման հանձնախումբը իր գործունեությունն իրականացնում է համագործակցելով համալսարանի ուսումնական ու այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ:
 - 1.3 Կրթության որակի վերահսկման համակարգը կոչված է վերլուծելու ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տվյալները և դրանց արդյունքների հիման վրա ներկայացնելու առաջարկություններ ղեկավարությանը և համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպող բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին, համապատասխան լուծումներ տալու համար:
 - 1.4 Որակի վերահսկման հանձնախումբը իր գործառույթները կարգավորում է համալսարանի կանոնադրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքներով, համալսարանի գիտական խորհրդի որոշումներով, և սույն Կանոնակարգով:
 - 1.5 Որակի վերահսկման հանձնախմբի կառուցվածքը, կազմը և լիազորությունների ժամկետները հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից :
 - 1.6 Սույն Կանոնակարգը կարող է փոփոխվել կամ լրամշակվել գիտական խորհրդի որոշմամբ:

2.ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1 Վերահսկողություն սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ, գնհատել դրա համապատասխանությունը գործող օրենսդրության, կանոնակարգերի, հրամանների, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների և այլ նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:
- 2.2 Առաջարկվող կրթական բոլոր ծրագրերի և որակավորումների համար ապահովել բարձրագույն կրթության ստանդարտների և չափանիշների պահպանումը:

- 2.3 Վերահսկել և ապահով համալսարանի պարբերական հաշվետվությունների և տեղեկատվության ժամանակին ներկայացումը պետական լիազոր մարմին, գործատուներին և ֆինանսավորողներին:
- 2.4 Աջակցել համալսարանում ուսուցման որակի բարձրացման և դրա ապահովման մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, նպաստել համալսարանի ռազմավարական նպատակների իրականացմանը:
- 2.5 Ուսումնասիրել և վերահսկել ուսումնական և օրացուցային պլանների, առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին և ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցների պահանջներին:
- 2.6 Վերահսկողություն սահմանել կրթական ծրագրերի իրականացման և որակի ապահովման համար պատասխանատու ստորաբաժանումների գործունեության վրա:
- 2.7 Ուսումնասիրել բակալավրիատուրայի և մագիստրատուրայի առարկայական ծրագրերը, տալ համեմատական գնահատական, նշել թերություններն ու կրկնությունները (նաև դասալսումների միջոցով) և հարց բարձրացնել դրանց վերացման համար:
- 2.8 Իրականացնել համալսարանի զարգացման ռազմավարության դրույթներին համապատասխան որակի ներքին վերահսկողության քաղաքականություն:

3. ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 3.1 Վերահսկողություն սահմանել համալսարանում ուսումնական, ուսումնադաստիարակչական, մեթոդական և գիտական աշխատանքների կատարման նկատմամբ,
- 3.2 Վերահսկողություն սահմանել դասախոսություններ, լաբորատոր ու գործնական պարապմունքների, ուսանողների հաճախումների նկատմամբ, անհարգելի բացակայությունների և դասաձախողումների յուրաքանչյուր դուպլ դարձնել քննարկման առարկա, տալ առաջարկություններ ռեկտորատում և գիտխորհրդում քննարկելու համար:

- 3.3 Վերահսկողություն սահմանել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի լիարժեք կատարման նկատմամբ և միջոցառումներ մշակել դրանց բարելավման և կատարելագործման ուղղությամբ:
- 3.4 Ուսումնասիրել ուսումնական պլաններն ըստ առանձին մասնագիտությունների, վեր հանել տեղ գտած թերություններն ու կրկնությունները, մշակել առաջարկություններ ժամանակի պահանջներից ելնելով անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:
- 3.5 Վերահսկողություն իրականացնել առարկաների դասավանդման ու պարապմունքների կազմակերպման վիճակի նկատմամբ և ուսումնասիրել դրանց համապատասխանությունը հաստատված կանոնակարգին, չափորոշիչներին և ընթացակարգերին, ինչպես և ուսանողների գիտելիքների գնահատման նորմատիվներին և պարբերաբար կազմակերպել դասախոսությունների, լաբորատոր ու գործնական պարապմունքների դասալսումներ, արդյունքների քննարկումներ և նպաստել դասախոսների վերապատրաստման գործընթացին:
- 3.6 Վերահսկել ուսանողների առաջադիմության ռեյտինգային գնահատման, կրեդիտների կուտակման և առաջադիմության միջին որակային գնահատականի համակարգի ներդրման գործընթացները,
- 3.7 Վերահսկել ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգումների, միջանկյալ ատեստավորումների, քննությունների, ինքնուրույն և անհատական աշխատանքների կատարման գործընթացները,
- 3.8 Վերահսկել ընդունված չափորոշիչներին համապատասխան ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործընթացները, ըստ առանձին մասնագիտությունների գնահատել դրանց նպատակային (արդյունավետ) անցկացման հուսալի բազաների առկայությունը:
- 3.9 Վերահսկել կուրսային և դիպլոմային նախագծերի (աշխատանքային), հաշվարկագրաֆիկական աշխատանքների սահմանված ժամանակացույցին համապատասխան և պահանջվող որակով կատարման ընթացքը, ստուգել դրանց թեմատիկան, արդիականությունը և անհրաժեշտ մեթոդական գրականությամբ ապահովվածությունը ու դիպլոմային նախագծերի գրախոսման գործընթացները:

- 3.10 Վերահսկողություն սահմանել պետական քննական հանձնաժողովների գործունեության նկատմամբ:
- 3.11 Ուսումնասիրել ֆակուլտատների դեկանատներում և ամբիոններում պահպանվող փաստաթղթերի առկայությունը, գնահատել գործավարության վիճակը և վերահսկողություն սահմանել դրանց ժամանակացույցի համապատասխան և պահանջվող մակարդակով կատարման գործընթացի նկատմամբ:
- 3.12 Վերահսկել պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի մրցույթային ընտրության իրականացման համապատասխանությունը հաստատված նորմատիվային փաստաթղթերի դրույթներին:
- 3.13 Ուսումնասիրել կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ օժանդակ ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի ապահովվածության մակարդակը, գրադարանային ֆոնդի, գիտական և ուսումնական լաբորատորիաների, ինչպես նաև տեխնիկական միջոցների առկայությունն ու օգտագործման վիճակը և դրանց համալրման ու վերազինման հնարավորություններն ու օգտագործման արդյունավետությունը:
- 3.14 Ուսումնասիրել ուսուցման տեխնիկական ժամանակակից միջոցների կիրառման, համակարգչային տեխնիկայի ու ծրագրային նյութերի ընդլայնման և մեթոդական պահովվածության բարելավման հնարավորությունները:
- 3.15 Վերահսկողություն իրականացնել ուսանողներ ընթացիկ (միջանկյալ) և կիսամյակային առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հավաքագրման և մշակման գործընթացների նկատմամբ:
- 3.16 Վերահսկողություն սահմանել ռեկտորատ-ուսումնամեթոդական կենտրոն դեկանատներ-ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ և հակառակ ուղղությամբ, ուսումնական գործընթացի և այլ գործառույթների վերաբերյալ սահմանված ժամկետներում և սահմանված կարգով տեղեկատվության փոխանցման գործընթացի նկատմամբ:
- 3.17 Ուսումնասիրել և վերահսկել ամբիոններում, պրոֆլեմային լաբորատորիաներում և Գիտական կենտրոններում թեմատիկայի արդիականությունը, կատարման ընթացքը և որակը, վեր հանել տեղ գտած թերություններն ու կրկնությունները, առաջարկություններ մշակել և ներկայացնել համալսարանի ռեկտորին:

4. ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԽՄԲԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1 Կրթության որակի վերահսկման հանձնախմբի անդամների պատասխանատվությունը սահմանվում է համապատասխան պաշտոնական (ռեկտորի) ցուցումներով և սույն կանոնակարգով:
- 4.2 Կրթության որակի վերահսկման հանձնախմբի սույն կանոնակարգով նախատեսված գործառույթների իրականացման պատասխանատվությունը կրում են հանձնախմբի ղեկավարն ու անդամները:
- 4.3 Համատեղել և փոխկապակցել որակի վերահսկման գործընթացի հիմնական ասպեկտները.
- ուսման որակի ապահովման վերահսկում,
 - ուսման որակի բարելավում,
 - կրթության որակի վերահսկման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում

5. Որակի վերահսկման խմբի իրավունքները

- 5.1 կրթության որակի վերահսկման հանձնախումբը իրավունք ունի համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից պահանջել ու ստանալ կրթական գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկատվություն,
- 5.2 Որակի վերահսկման հանձնախումբը ռեկտորի թույլատվությամբ կարող է ուսման որակի վերահսկման խնդիրների վերաբերյալ երաշխավորություններ և առաջարկություններ ներկայացնել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին,
- 5.3 Որակի վերահսկման հանձնախումբն իրավունք ունի դասալսումների արդյունքների հիման վրա առաջարկություններ ներկայացնել համալսարանի ռեկտորին առանձին դասախոսների հետ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրերի վերանայման առումով,
- 5.4 Որակի վերահսկման հանձնախումբը իր գործառույթների իրականացման ընթացքում համագործակցում է պրոռեկտորների, ուսումնամեթոդական կենտրոնի, դեպարտամենտի, ամբիոնների, ուսանողական խորհրդի, դասախոսների և փորձագետների հետ: